



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

04 նոյեմբերի 2021 թվականի թիվ 176-Ա

ք. Երևան

«ՅՈՒՔՈՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի հոկտեմբերի 07-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 58 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՅՈՒՔՈՍ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից «HBO», «CTB», «FashionHD», «THT», «TV 3», «Пятница», «Vmedia», «Vmedia +» տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելու Օրենքի պահանջի խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 07-ի թիվ 46-Ա հրամանը՝ իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 07-ին Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը՝ 13:00-ից մինչև ժամը՝ 14:30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են թվով 202 տեսալսողական ծրագրեր, որոնց թվում նաև «Արմենիա Թի Վի պրեմիում», «Հ 1», «Հ 2», «Արմենիա Թի Վի», «5-րդ ալիք», «Ա Թի Վի», «Արմնյուզ», «21 Թի Վի», «Первый канал», «Россия РТР», «Россия К», «THT», «CTB», «Россия 24», «РБК», «Deutsche welle TV», «Fashion TV», «Тонус», «Bridge TV», «Viasat sport», «Aljazeera Arabic», «Investigation Discovery», «Nat Geo Wild», «Viasat explore», «Davinchi learning», «Ocean TV», «Телепутешествие», «RT documentary»,

«Время», «Eurika HD», «Пятница», «5-ый канал», «Zoo TV», «Russian Travel Guide», «Телеканал Драйв», «A1», «TNT 4», «VH1 Euro», «MT», «МТС 80s», «Русский хит», «TV 1000», «TV 1000 action», «Еврокино HD», «TV1000 русское кино», «Zee TV», «A2», «Foxlife», «Nickelodeon», «O! », «Карусель», «Телеканал Победа», «Бобер», «Дорама», «Вох Tv», «Поехали», «Fightbox», «Матч планета», «Fashion TV HD», «Приключение HD», «Охотник и рыболов», «Amedia Premium», «НВО», «Иллюзион HD», «Точка отрыва HD», «Nat Geo wild HD», «Fast and Fun Vox», «Euronews English», «TV 3», «Bridge classic», «A1 HD», «A2 HD», «RT Doc HD», «Russian», «Docubox HD», «RT Spanish», «8-ой канал», «Դելտա TV HD», «Ցայգ TV», «Ֆորտունա TV HD», «Տավուշ TV», «ТВИ», «Vmedia», «Vmedia +», «Բազմոց TV», «Ֆիլմզոն», «Խաղալիք», «Սինեման», «Տունտունիկ» տեսալսողական ծրագրերը:

Արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից 2021 թվականին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդող տեսալսողական ծրագրերի ցանկերի համադրության արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են «Արմենիա Թի Վի պրեմիում», «Հ 1», «Հ 2», «Արմենիա Թի Վի», «5-րդ ալիք», «Ա Թի Վի», «Արմյուլզ», «21 Թի Վի», «Первый канал», «Россия РТР», «Россия К», «ТНТ», «СТВ», «Россия 24», «РБК», «Deutsche welle TV», «Fashion TV», «Тонус», «Bridge TV», «Viasat sport», «Aljazeera Arabic», «Investigation Discovery», «Nat Geo Wild», «Viasat explore», «Davinchi learning», «Ocean TV», «Телепутешествие», «RT documentary», «Время», «Eurika HD», «Пятница», «5-ый канал», «Zoo TV», «Russian Travel Guide», «Телеканал Драйв», «A1», «TNT 4», «VH1 Euro», «MT», «МТС 80s», «Русский хит», «TV 1000», «TV 1000 action», «Еврокино HD», «TV1000 русское кино», «Zee TV», «A2», «Foxlife», «Nickelodeon», «O! », «Карусель», «Телеканал Победа», «Бобер», «Дорама», «Вох Tv», «Поехали», «Fightbox», «Матч планета», «Fashion TV HD», «Приключение HD», «Охотник и рыболов», «Amedia Premium», «НВО», «Иллюзион HD», «Точка отрыва HD», «Nat Geo wild HD», «Fast and Fun Vox», «Euronews English», «TV 3», «Bridge classic», «A1 HD», «A2 HD», «RT Doc HD», «Russian», «Docubox HD», «RT Spanish», «8-ой канал», «Դելտա TV HD», «Ցայգ TV», «Ֆորտունա TV HD», «Տավուշ TV», «ТВИ», «Vmedia», «Vmedia +», «Բազմոց TV», «Ֆիլմզոն», «Խաղալիք», «Սինեման», «Տունտունիկ» տեսալսողական ծրագրերը, որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկից:

Օրենքի 42-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է կարգավորող պետական մարմնի և օպերատորի ներկայացուցիչը:

Ըստ Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության հավաստման ցանցային օպերատորի գործունեության տեղում դիտարկում իրականացնելու ժամանակ ցանցային օպերատորի ղեկավարը և ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձը ցանցային օպերատորի գործունեության վայրում չեն եղել արձանագրությունը ստորագրելու պահին և չեն ստորագրել 2021 թվականի հոկտեմբերի 07-ին տեղում դիտարկման արդյունքներով կազմված արձանագրությունը, հետևաբար Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ մասով՝ 2021 թվականի հոկտեմբերի 08-ին թիվ 04-875 գրությամբ արձանագրության երկրորդ օրինակն առաքել է ցանցային օպերատորին՝ փոստով:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի հոկտեմբերի 07-ին

ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 07-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի հոկտեմբերի 11-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ իրենց պարզաբանումները, բացատրությունները և վերոնշյալ տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերը կարող են ներկայացնել Հանձնաժողով:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորը 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հանձնաժողով գրավոր բացատրություն է ներկայացրել այն մասին, որ «ՅՈՒՔՈՍ» ՓԲ ընկերության կողմից 2021 թվականի սեպտեմբերի 09-ին Հանձնաժողով ուղարկված Ելք-1968 գրությանը չեն կցվել ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերը տեխնիկական բնույթի սխալի պատճառով, թեպետ գրությամբ նշվել էր, որ ցանկը կից ներկայացվում է:

Ցանցային օպերատորն իր բացատրությամբ պարզաբանում է նաև, որ «ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊ, «ՎԻ ԷՍ ՏԵԼԵՊՐՈՋԵԹ» ՍՊ, «ՀԻԲԻԴ ՍՈՒՅՈՒՇՆՍ» ՍՊ և «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՆԼԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունների հետ պայմանագրերի կնքման գործընթացը դեռևս չի ավարտվել (գտնվում է պայմանագրերի ստորագրման փուլում) և պայմանագրերը կնքելուց հետո Հանձնաժողովին գրավոր կտեղեկացնեն: Ցանցային օպերատորի կողմից բացատրությանը կից ներկայացվել է վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերը, որտեղ նշված է նաև տեսալսողական ծրագրերի իրավատերերի հետ կնքված պայմանագրերի գործողության ժամկետները, ինչպես նաև կնքման և վերակնքման փուլում գտնվող պայմանագրերի վերաբերյալ տեղեկություն:

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչությունն իրականացրել է ցանցային օպերատորի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերի և տեղում դիտարկման արդյունքներով արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի կրկնակի համադրություն, որի արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից փաստացի վերահաղորդվում են «HBO», «CTB», «Fashion HD» տեսալսողական ծրագրերը (ներկայացված ցանկում նշված է «Fashion SD» տեսալսողական ծրագիր, իսկ տեղում դիտարկման ժամանակ արձանագրվել է «Fashion SD» և «Fashion HD» տեսալսողական ծրագրերի վերահաղորդում), որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկերից, պարզվել է նաև, որ «THT International», «TB-3 International», «Friday International» տեսալսողական ծրագրերի իրավատիրոջ («ՀԻԲԻԴ ՍՈՒՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի) և «Vmedia», «Vmedia+» տեսալսողական ծրագրերի իրավատիրոջ («ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-ի) հետ պայմանագրերի կնքման գործընթացը դեռևս ավարտված չէ, սակայն տեղում դիտարկման ժամանակ վերոնշյալ տեսալսողական ծրագրերը փաստացի վերահաղորդվել են:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի՝ Հանձնաժողովն՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերը սահմանում են .

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց»:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի նյութերը և առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ ներկայացված ապացույցներով, ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ ղեկավարվելով Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և 60-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով՝ Հանձնաժողովը 2021 թվականի սեպտեմբերի 08-ին թիվ 04-795 գրությամբ Հայաստանի Հանրապետությունում ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող բոլոր ընկերություններին, այդ թվում «ՅՈՒՔՈՍ» ՓԲ ընկերությանն առաջարկել է ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ամբողջական ցանկը թղթային և էլեկտրոնային տարբերակով ներկայացնել Հանձնաժողով: Ցանցային օպերատորի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 09-ին Հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին ուղարկվել է իր կողմից վերահաղորդվող

տեսալսողական ծրագրերի վերաբերյալ գրությունը (09. 09. 2021թ-ի Ելք-1968 գույքումը), սակայն գրությանը կցված չեն եղել վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը (ցանկերը), որի մասին Հանձնաժողովը տեղեկացրել է ցանցային օպերատորին վերջինիս էլեկտրոնային հասցեին ուղարկված նամակով, սակայն մինչև վարչական վարույթի հարուցումը ցանցային օպերատորի կողմից պահանջվող տեղեկատվությունը Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և դիտարկման արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 07-ին կազմված արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից դեռևս 2021 թվականին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերի համադրության արդյունքում պարզել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են մի շարք տեսալսողական ծրագրեր, որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկերից:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին, ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկին և հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորն իր գործունեությունն իրականացնում է՝ խախտելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Հանձնաժողովը վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում է, որ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը վերահաղորդել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած ցանցային օպերատորը վերահաղորդում է տեսալսողական ծրագրեր և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Սակայն, վարչական վարույթի շրջանակում 2021 թվականի հոկտեմբերի 22-ին ցանցային օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացվել է վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի նոր ցանկեր, որոնք ըստ ցանցային օպերատորի տեխնիկական սխալի պատճառով կցված չեն եղել դեռևս 2021 թվականի սեպտեմբերի 09-ին Հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին ուղարկված գրությանը:

Ցանցային օպերատորի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի նոր ցանկերի և տեղում դիտարկման արդյունքներով կազմված արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի կրկնակի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ ցանցային օպերատորն առանց իրավական հիմքերի (պայմանագրերի) վերահաղորդում է «HBO», «CTB», «Fashion HD», «THT», «TV 3», «ПЯТНИЦА», «Vmedia», «Vmedia +» տեսալսողական ծրագրերը՝ խախտելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, ցանցային օպերատորն առանց պայմանագրերի տեսալսողական ծրագրերի վերահաղորդում է իրականացնում, իսկ ցանցային օպերատորի կողմից ներկայացված բացատրությունները հիմնավոր և բավարար հիմք չեն, իրավախախտման փաստը բացառելու և ցանցային օպերատորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Հանձնաժողովի կողմից 2021 թվականի նոյեմբերի 04-ին անցկացված վարչական վարույթի քննարկման նիստին ներկա էին ցանցային օպերատորի ներկայացուցիչները, ովքեր ևս մեկ անգամ հաստատել են վարչական վարույթի շրջանակներում դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հանձնաժողով գրավոր ներկայացված պարզաբանումները և հավելել, որ «ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊ, «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ և «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունների հետ պայմանագրերի կնքման նախնական համաձայնություն է ձեռք բերվել և հիմնական պայմանագրերը դեռևս կնքված չեն, բայց քանի որ միջանկյալ փաստաթուղթը, վերջնական պայմանագիր չի համարվում, ուստի այդ մասին Հանձնաժողովին չեն տեղեկացրել: Նշել են նաև, որ պայմանագրերի կնքման վերաբերյալ նախնական համաձայնություն ձեռք բերելը հավաստում է այն մասին, որ կկնքվեն հիմնական պայմանագրեր:

Նիստի ընթացքում ցանցային օպերատորի ներկայացուցիչները Հանձնաժողովին ներկայացրել են «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔՐ» ՍՊ ընկերության հետ կնքված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման պայմանագրեր:

Ներկայացուցիչներն անդրադարձել են խնդրո առարկա հանդիսացող «THT», «TV 3», «ПЯТНИЦА» տեսալսողական ծրագրերի վերահաղորդմանը և նշել, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են «THT International», «TV-3 International» և «Friday International» տեսալսողական ծրագրերը և այդ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը նախկինում հանդիսացել է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔՐ» ՍՊ ընկերությունը, սակայն, այժմ դիստրիբյուտորը հանդիսանում է «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությունը, որի հետ պայմանագրերի կնքման համաձայնություն է ձեռք բերվել: Ներկայացուցիչներն անդրադարձել են նաև «Vmedia», «Vmedia +» տեսալսողական ծրագրերի վերահաղորդմանը և նշել, որ այդ տեսալսողական ծրագրերը դիստրիբյուտորի («ՎԻՎԱՌՈ ՄԵԴԻԱ» ՍՊԸ) հետ ձեռք բերված նախնական համաձայնության համաձայն՝ վերահաղորդվում են փորձնական թեստավորման ռեժիմով:

Նիստի քննարկման ընթացքում ցանցային օպերատորի ներկայացուցիչները բավարար տեղեկություն չեն ունեցել խնդրո առարկա հանդիսացող «HBO», «CTB» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերի վերաբերյալ:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը, պայմանագրերը և ուսումնասիրության արդյունքում

Հանձնաժողովն ընդունել է օրինական հիմքով ներկայացված պայմանագրերը, սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ տեղում դիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են «HBO», «CTB» տեսալսողական ծրագրերը, իսկ վարչական վարույթի և քննարկման ընթացքում ցանցային օպերատորի կողմից «HBO», «CTB» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերը չեն ներկայացվել և իրավատերերի հետ պայմանագրերը դեռևս կնքված չեն, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ խախտվել է Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, ցանցային օպերատորի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Իսկ Օրենքի 56-րդ հոդվածով սահմանված է՝ սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերով, 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 56-րդ հոդվածով, 60-րդ հոդվածի 8-րդ մասով և հիմք

ընդունելով «Տեսալսողական մեղիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասը՝
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով 14 003 200 (տասնչորս միլիոն երեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով:

2. «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությանը նախազգուշացնել՝ իր ցանցում վերահաղորդող տեսալսողական ծրագրերի և վերահաղորդող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ողջամիտ ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

04 նոյեմբերի 2021թ.

ք. Երևան